ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
Ռոբերտ Խաչատրյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Ք. Թբիլիսի (Վրաստան), 2022թ. մայիսի 30-ից մայիսի 31-ը:

4. **Հրավիրող կողմը.**
Վրաստանի կառավարություն:

5. **Գործուղման նպատակը.**
Վրաստանի կառավարության ներկայացուցիչների հետ քննարկումներ և հանդիպումներ՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվայնացման ոլորտներում երկկողմ հարաբերությունները խորացնելու և փոխադարձ շահավետ համագործակցությունը զարգացնելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**
Այցի շրջանակներում քննարկվել են տարածաշրջանային տվյալների մշակման կենտրոնների և ամպային հաշվարկների զարգացման, երկու երկրների ՏՀՏ ընկերությունների միջև գործընկերային հարաբերությունների խթանման, ՏՀՏ ոլորտում ներդրումների ներգրավման, թվային տնտեսության զարգացման, նորարարության, տեխնոլոգիաների և ՏՀՏ ոլորտներում համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև ենթակառուցվածքային մի շարք ծրագրերի վերաբերյալ հարցեր, որոնք միտված են նպաստելու հաղորդակցության ոլորտի միջազգային նախագծերում փոխգործակցության իրականացմանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2022թ. մայիսի 30-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը մասնակցել է Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի հետ տեղի ունեցած հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են հայ-վրացական հարաբերություններին և զարգացման հեռանկարներին վերաբերող հարցեր: Ընդգծվել է Վրաստանի հետ հարաբերությունների շարունակական զարգացման ու ամրապնդման կարևորությունը՝ հաշվի առնելով տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման մեծ ներուժի առկայությունը:

Կողմերը կարևորել են տրանսպորտի, կապի, հաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում փոխգործակցության շարունակական զարգացումը: Մասնավորապես քննարկվել են ենթակառուցվածքային մի շարք ծրագրերի վերաբերյալ հարցեր, որոնք միտված են օժանդակելու տրանսպորտային և հաղորդակցության միջազգային նախագծերում համագործակցության ակտիվացմանը:

Հանդիպմանը քննարկվել են նաև անվտանգային, քաղաքական և տարածաշրջանային նշանակության հարցեր. նշվել է Հայաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների կարևորությունը Հարավային Կովկասում անվտանգության ապահովման համար:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը 2022թ. մայիսի 31-ին մասնակցել է Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի հետ կայացած պաշտոնական հանդիպմանը: Հանդիպմանն առանձնահատուկ կարևորվել է միջխորհրդարանական համագործակցությունը, բարեկամության խմբերի, երկու երկրների խորհրդարաններում գործող հանձնաժողովների միջև պարբերական հանդիպումների կազմակերպումը:

Երկուստեք ընդգծվել է Հայաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների հետագա զարգացման ու ընդլայնման անհրաժեշտությունը:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը 2022թ. մայիսի 31-ին մասնակցել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ կայացած պաշտոնական հանդիպմանը, որի ընթացքում կողմերը քննարկել են պատմական ամուր հենքի վրա հիմնված միջպետական համագործակցության նոր ուղղություններով զարգացման

հնարավորությունը: Կարևորվել է Հայաստանի և Վրաստանի տարբեր գերատեսչությունների միջև սերտ փոխգործակցությունն ու շփումների ակտիվացումը, ընդգծվել տարածաշրջանում կայուն և երկարատև խաղաղության հաստատման անհրաժեշտությունը: Կողմերն անդրադարձել են նաև հայ-վրացական հարաբերությունների հետագա զարգացման հնարավորություններին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները կապի, թվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության և այլ ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր և նախագծեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
03.06.2022թ.